ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

# ՈՐՈՇՈՒՄ

16 մայիսի 2016 թվականի **թիվ 37** քաղ. Մոսկվա

**«Մեքենաների եւ սարքավորումների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգում (ՄՄ ՏԿ 010/2011) փոփոխություններ կատարելու մասին**

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 52-րդ հոդվածին եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի 1-ին հավելվածի 29-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը որոշեց.

1. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 823 որոշմամբ ընդունված «Մեքենաների եւ սարքավորումների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգում (ՄՄ ՏԿ 010/2011) կատարել փոփոխություններ՝ հավելվածի համաձայն։

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիսը լրանալուց հետո:

**Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝**

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Հայաստանի Հանրապետությունից՝** | **Բելառուսի Հանրապետությունից՝** | **Ղազախստանի Հանրապետությունից՝** | **Ղրղզստանի Հանրապետությունից՝** | **Ռուսաստանի Դաշնությունից՝** |
| **Վ. Գաբրիելյան** | **Վ. Մատյուշեւսկի** | **Բ. Սագինտաեւ** | **Օ. Պանկրատով** | **Ի. Շուվալով** |

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի
մայիսի 16-ի թիվ 37 որոշման

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**«Մեքենաների եւ սարքավորումների անվտանգության մասին»**
**Մաքսային միության տեխնիկական կանոնակարգում (ՄՄ ՏԿ 010/2011)**
**կատարվող**

1. 1-ին հոդվածի 5-րդ կետը «սարքավորում» բառից հետո լրացնել «այդ թվում» բառերով:

2. Նշված տեխնիկական կանոնակարգի 3-րդ հավելվածում՝

«Մեքենաների եւ սարքավորումների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին սերտիֆիկացման ձեւով համապատասխանության հավաստման ենթակա՝ տեխնիկական կանոնակարգման օբյեկտների ցանկի 9-րդ կետը հանել.

«Մեքենաների եւ սարքավորումների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին հայտարարագրման ձեւով համապատասխանության հաստատման ենթակա տեխնիկական կարգավորման օբյեկտների ցանկի 46-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«46. Տեխնոլոգիական սարքավորումներ առեւտրի, հանրային սննդի եւ սննդային բլոկների ձեռնարկությունների համար՝

սարքավորումներ սննդամթերքի մեխանիկական մշակման համար, այդ թվում՝ սարքավորումներ պտուղ-բանջարեղենային բազաների եւ մթերող գործարանների համար,

ջերմային սարքավորումներ հանրային սննդի, սննդային բլոկների ձեռնարկությունների, ինչպես նաեւ պտուղ-բանջարեղենային բազաների եւ մթերող ֆաբրիկաների համար»։